

ՓԱՍՏԱՔԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ 3.1.9 ԵՆԹԱԿԵՏ

Համաձայն՝ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 3.1.9 ենթակետի. «Փաստաբանը չի կարող ընդունել նախաքննության և դատաքննության փուլերում տվյալ գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված՝ տվյալ վարույթին առնչվող անձի գործի վարման հետ կապված իրավականօգնություն ցույց տալու հանձնարարություն: Եթե փաստաբանը չկարողանա ապացուցել, որ քրեական գործով պաշտպանության համար իրեն է դիմել վստահորդը կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձ, ապա Պալատի խորհուրդը կարող է հաստատված համարել այն փաստը, որ փաստաբանը քրեական գործով վարույթում է հայտնվել նախաքննության մարմնի պատվերով: Պալատի խորհուրդը կարող է հաշվի առնել նաև փաստաբանի կողմից իրականացրած գործողությունների բնույթը՝ վստահորդի շահերը պատշաճ կարգով ներկայացված լինելու տեսանկյունից: Փաստաբանի կողմից նախաքննության մարմնի պաշտոնատար անձի հանձնարարությամբ (առաջարկությամբ) գործին ներգրավված լինելու և վստահորդին բավարար իրավական օգնություն ցույց տված չլինելու արարքների համակցությունը հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում»:

Տվյալ նորմի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ փաստաբանը գործով պաշտպան կարող է ներգրավվել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի կամ վերջիններիս ազգականների հրավերով կամ կասկածյալի կամ մեղադրյալի հանձնարարությամբ այլ մասնավոր անձի հրավերով՝ դիմումով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ: Վերը նշված անձանցից բացի այլ անձի հրավերով կամ հանձնարարությամբ փաստաբանն իրավասու չէ գործով ներգրավվել որպես պաշտպան:

Կանոնագիրքը փաստաբանի վարքագծի խախտում է դիտում այն փաստը, որ փաստաբանը գործում ներգրավվում է տվյալ գործով վարույթն իրականացնող պաշտոնատար անձի հրավերով:

Ասվածի վառ օրինակ կարող է հանդիսանալ այն դեպքը, երբ գործով քննիչը, կասկածյալին կամ մեղադրյալին իրավական օգնություն տրամադրելու

համար իր միջոցներով հրավիրում է փաստաբան, ընդ որում բացարձակ էական չէ փաստաբանը վարձատրություն ստացել է քննիչի կողմից, թե դա իրականացրել է՝ հաշվի առնելով ընկերական կամ հարազատական կամ այլ հանգամանքներ:

Հատկանշական է, որ Կանոնագիրքը Պալատի խորհրդին լիազորել է ապացուցված համարել այն փաստը, որ փաստաբանը գործում ներգրավվել է վարույթ իրականացնող պաշտոնատար անձի հրավերով, եթե փաստաբանը չի ապացուցում հակառակը:

Վարույթն իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրավական օգնություն ցույց տալուն ուղղված հանձնարարությունն ինքնին բավարար է Կանոնագրքի 3.1.9 ենթակետի խախտումն արձանագրելու համար, սակայն Պալատի խորհուրդն նշված ենթակետի խախտման հիմքով կարգապահական գործեր քննելիս, քննարկման առարկա է դարձնում նաև փաստաբանի կողմից իր վստահորդին կամ պաշտպանյալին բավարար իրավական օգնություն տրամադրած լինելու հանգամանքը, քանի որ Կանոնագրքի 3.1.9 ենթակետն ակնհայտ կոպիտ խախտում է դիտում այն փաստը, երբ փաստաբանն ընդունել է վարույթն իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված՝ տվյալ վարույթին առնչվող անձի գործի վարման հետ կապված իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը և բավարար իրավական օգնություն ցույց չի տվել իր վստահորդին կամ պաշտպանյալին:

Յուրաքանչյուր գործով Պալատի խորհուրդն է գնահատում իրավական օգնություն ցույց տալու բավարար լինել կամ չլինելու հանգամանքը, սակայն այս արարքների համակցության պայմաններում Պալատի խորհուրդն իրավասու է ընտրել առավել խիստ կարգապահական տույժի տեսակը, այն է՝ փաստաբանական գործունեության արտոնագրի դադարեցումը:

ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհրդի անդամ
փաստաբան Հայկազ Գալստյան